



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 127052 գործարք, որոնց քանակը, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 0.8 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 35373 օտարման գործարքների 72.7 %-ը կազմել է առուվաճառքը, 26.9 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման

գործարքների 40.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.2 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 3.4 %-ով: 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10746 առուվաճառքի գործարքների 63.9 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 17.0%-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2016թ.	9 ամիս 2017թ.
<b>Կենտրոն</b>	428100	441300
<b>Արաբկիր</b>	357100	345700
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	283100	271700
<b>Նոր-Նորք</b>	254100	238500
<b>Ավան</b>	261600	252400
<b>Էրեբունի</b>	252300	240900
<b>Շենգավիթ</b>	257600	244900
<b>Դավթաշեն</b>	276700	258150
<b>Աջափնյակ</b>	250900	235700
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	244000	233800
<b>Նուբարաշեն</b>	157300	156600
<b>Միջինը Երևանում</b>	<b>274800</b>	<b>265400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.4 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2922 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.9 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2016թ.	9 ամիս 2017թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	108800
	Ապարան	58400	58900
	Թալին	66700	63400
Արարատ	Արտաշատ	98800	93800
	Մասիս	115800	105800
	Վեդի	101700	94050
	Արարատ	77400	77900
Արմավիր	Վաղարշապատ	154200	136200
	Արմավիր	121200	105600
	Մեծամոր	87600	78300
Գեղարքունիք	Սևան	99400	85600
	Գավառ	60500	55300
	Մարտունի	107700	106800
	Վարդենիս	45200	45800
	Ճամբարակ	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	84800
	Ստեփանավան	74700	70300
	Սպիտակ	99850	93100
	Ալավերդի	55700	51600
	Տաշիր	47400	47400
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20500	24700
Կոտայք	Աբովյան	155100	150800
	Նոր Հաճն	128550	122400
	Բյուրեղավան	108200	97700
	Եղվարդ	109800	106500
	Հրազդան	63900	58900
	Ծաղկաձոր	292400	290000
Չիրակ	Զարենցավան	85500	77700
	Գյումրի	109400	97000
	Արթիկ	67200	67600
	Մարալիկ	41000	41700
	Գորիս	123700	124400
	Կապան	95000	95900
Սյունիք	Սիսիան	92200	90300
	Մեղրի	83000	87000
	Քաջարան	94850	97200
	Դաստակերտ	8000	8000
	Վայք	95100	92900
	Եղեգնաձոր	126200	122900
Վայոց ձոր	Ջերմուկ	113200	104800
	Դիլիջան	115500	111000
	Իջևան	118500	113300
Տավուշ	Բերդ	60400	61200
	Նոյեմբերյան	50350	50800
	Այրում	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.2 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 3493 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1024, մարզերում՝ 2469: 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 15.5 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 14.9 %-ով, իսկ մարզերում՝ 15.8 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2016թ.	9 ամիս 2017թ.
<b>Կենտրոն</b>	476200	476100
<b>Արաբկիր</b>	383100	381000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	295000	286800
<b>Նորք-Մարաշ</b>	319200	305200
<b>Ավան</b>	270500	264500
<b>Էրեբունի</b>	239750	136100
<b>Շենգավիթ</b>	255000	237300
<b>Դավթաշեն</b>	276000	270400
<b>Աջափնյակ</b>	250100	243700
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	238100	235600
<b>Նուբարաշեն</b>	150800	150300
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>286700</b>	<b>271550</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.3 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2016թ.	9 ամիս 2017թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	132600
	Ապարան	60050	54900
	Թալին	69250	67100
Արարատ	Արտաշատ	100000	98200
	Մասիս	115100	112000
	Վեդի	102300	94500
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	150700
	Արմավիր	107000	103000
Գեղարքունիք	Սևան	94950	93600
	Գավառ	57100	55100
	Մարտունի	96100	95400
	Վարդենիս	41100	41150
	Ճամբարակ	31100	31500
	Վանաձոր	100900	99600
Լոռի	Ստեփանավան	91200	86300
	Սպիտակ	114000	110400
	Ալավերդի	50200	50400
	Տաշիր	51900	47400
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
	Արուսյան	157300	156200
Կոտայք	Նոր Հաճն	129800	127200
	Բյուրեղավան	120500	113300
	Եղվարդ	116100	111400
	Հրազդան	82600	74800
	Ծաղկաձոր	305000	301800
	Չարենցավան	83000	80700
	Գյումրի	119300	117600
Շիրակ	Արթիկ	63400	61400
	Մարալիկ	52000	52000
	Գորիս	130000	128900
Սյունիք	Կապան	100700	100800
	Սիսիան	96500	95900
	Մեղրի	84600	86200
	Դաստակերտ	11600	11700
	Վայք	90150	88600
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116750	114800
	Ջերմուկ	131300	129700
	Դիլիջան	115600	114700
Տավուշ	Իջևան	123200	121300
	Բերդ	60100	58000
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի

շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.2 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 11261 միավոր (9325.99 հա) հող, որից Երևանում՝ 845 միավոր (273.41 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 6395 միավոր (8614.31 հա), որից Երևանում՝ 95 միավոր (21.30 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 3402 միավոր (285.07 հա), որից Երևանում՝ 396 միավոր (18.14 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1114 միավոր (76.39 հա), որից Երևանում՝ 324 միավոր (35.67 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 163 միավոր (220.38 հա), որից Երևանում՝ 26 միավոր (173.79 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 64 միավոր (79.91 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 117 միավոր (45.95 հա), որից Երևանում՝ 3 միավոր (21.30 հա),
- ջրային հող՝ 5 միավոր (0.77 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (3.21 հա) մակերեսով Երևանում:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 8991 միավորի (8059.20 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 700 միավոր (67.88 հա), նվիրատվության գործարք՝ 2200 միավոր (1233.52 հա), որից Երևանում՝ 123 միավոր (204.83 հա) և փոխանակության գործարք՝ 70 միավոր (33.27 հա), որից Երևանում՝ 22 միավոր (0.69 հա):

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 0.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 26.1 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3670.56 հա, որից 3623.75 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.6 %-ը կամ 1941 միավորը (1720.60 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 195 միավոր (5.69 հա), իսկ 77.3 %-ը կամ 6949 միավորը (6334.06 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 495 միավոր (61.83 հա): 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 101 գործարք (4.53 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	2	0.10	70	1.99	123	3.60	61	13.61	20	10.48	258	13.06	155	24.59
Արագածոտն	154	439.84	10	0.48	24	1.12	26	1.22	659	750.87	1	0.005	173	20.86	6	0.79
Արարատ	80	136.10	7	0.77	49	3.72	37	1.06	699	324.33	7	1.16	366	32.42	51	1.25
Արմավիր	48	218.91	9	4.74	7	0.22	22	0.19	671	3404.84	4	0.65	398	39.92	19	0.55
Գեղարքունիք	44	45.12	10	3.79	54	4.93	54	4.58	328	192.11	14	0.65	117	12.64	25	0.75
Լոռի	19	14.04	9	2.44	40	0.40	79	5.95	456	351.16	5	1.15	47	4.67	35	1.28
Կոտայք	160	248.06	10	1.18	262	14.68	80	3.99	875	407.59	5	1.32	470	39.05	63	3.43
Շիրակ	17	38.67	6	14.21	37	2.46	32	1.19	296	269.34	1	0.60	79	7.61	15	0.29
Սյունիք	9	7.88	10	2.03	27	0.53	13	1.26	135	138.03	2	1.27	65	4.96	11	0.20
Վայոց ձոր	95	439.71	1	0.02	8	0.60	13	0.42	86	195.75	1	0.04	27	2.45	15	0.28
Տավուշ	45	24.34	16	7.03	31	1.70	38	0.67	127	43.74	0	0.00	56	5.58	21	1.05
Ընդամենը	671	1612.67	90	36.79	609	32.35	517	24.13	4393	6091.37	60	17.33	2056	183.22	416	34.46

Ստորև ներկայացվում է 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	122	1.98	1	0.10	53	0.54	68	1.34	73	3.714	0	0.00	1	0.004	17	1.45	55	2.26
Արագածոտն	2	0.054	1	0.05	0	0.00	1	0.004	212	442.6	154	439.84	9	0.43	24	1.12	25	1.21
Արարատ	20	0.69	3	0.11	7	0.13	10	0.45	143	113.74	70	108.89	4	0.65	42	3.59	27	0.61
Արմավիր	9	0.12	1	0.09	3	0.01	5	0.02	76	221.25	47	216.22	8	4.65	4	0.21	17	0.17
Գեղարքունիք	27	0.71	2	0.26	9	0.22	16	0.23	123	53.07	32	40.48	8	3.53	45	4.71	38	4.35
Լոռի	50	5.42	2	1.84	20	0.26	28	3.32	97	17.40	19	14.04	7	0.59	20	0.14	51	2.63
Կոտայք	70	1.67	1	0.50	57	1.08	12	0.09	436	259.63	154	241.44	9	0.69	205	13.60	68	3.90
Շիրակ	17	1.04	1	0.70	7	0.13	9	0.21	72	55.39	14	38.57	5	13.51	30	2.33	23	0.98
Սյունիք	17	0.04	0	0.00	15	0.03	2	0.01	42	11.67	9	7.88	10	2.03	12	0.50	11	1.26
Վայոց ձոր	4	0.151	0	0.00	1	0.001	3	0.15	112	440.59	94	439.70	1	0.02	7	0.60	10	0.27
Տավուշ	22	0.53	0	0.00	12	0.48	10	0.05	107	33.17	44	24.30	16	7.03	19	1.22	28	0.62
Ընդամենը	360	12.41	12	3.65	184	2.88	164	5.87	1493	1652.22	637	1571.36	78	33.13	425	29.47	353	18.26

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 34 գործարք (41.31 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 0.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 11.0 %-ով, իսկ

մարզերում՝ 0.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 0.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 3.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 14.3 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ աճել է 39.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (տախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	127	309.66	40.3	1540.0	465.6	406	290.58	365.0	12000.0	3368.2
Ալայրան	9	11.12	66.9	525.6	264.5	21	17.25	86.5	2727.3	643.6
Թալին	16	119.03	37.6	308.0	95.7	165	331.60	93.6	5494.5	677.2
Ծաղկահովիտ	2	0.03	2353.0	2420.0	2386.5	44	98.33	79.5	1000.0	435.9
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	33	42.42	70.9	3428.6	567.4	346	124.02	335.1	10833.3	2689.9
Մասիս	13	19.59	60.5	1437.5	193.1	132	70.14	200.0	11904.8	3404.2
Վեդի	24	46.88	60.0	9121.3	1622.4	210	127.89	207.0	10795.1	2000.3
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	18	27.69	61.2	1522.7	371.0	302	163.50	294.3	9090.0	1478.9
Բաղրամյան	22	119.26	70.9	2015.8	564.1	162	3071.88	90.6	2561.1	826.8
Վաղարշապատ	7	69.27	33.8	2219.3	574.1	194	102.62	444.4	11764.7	2043.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	0.36	191.6	191.6	191.6	156	49.81	199.8	1875.0	531.7
Ճամբարակ	10	3.45	287.6	1800.0	840.1	7	1.63	60.5	953.3	350.3
Մարտունի	7	23.28	121.2	1591.0	431.0	13	2.39	51.1	2850.0	742.8
Սևան	5	4.50	172.5	838.4	289.8	98	46.63	52.2	2134.8	361.7
Վարդենիս	9	8.89	185.4	1757.6	1126.3	50	87.56	41.2	2575.1	356.9
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	7	2.08	2442.0	5000.0	2889.7	44	30.85	170.4	6424.2	545.1
Գուգարք	5	1.33	418.0	1606.3	1310.5	40	13.08	234.6	6065.9	816.3
Սպիտակ	3	1.35	163.5	1050.0	497.2	19	8.04	250.0	5555.5	661.7
Ստեփանավան	4	9.28	167.8	1455.4	700.5	69	58.03	90.6	1686.6	421.2
Տաշիր						272	226.11	45.3	1384.4	187.3
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	67	115.42	87.5	5783.3	463.5	356	94.67	279.3	11942.7	3955.9
Եղվարդ	60	67.29	67.5	4722.6	726.5	417	223.19	174.4	11971.8	2572.6
Հրազդան	27	58.73	95.5	862.5	458.1	91	83.84	130.5	10256.4	1090.6
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	3	2.57	132.1	307.6	220.0	72	76.44	252.0	1693.1	707.3
Ամասիա						14	34.00	40.9	261.0	144.3
Անի	2	1.12	88.1	305.3	196.7	62	67.39	110.6	546.9	467.4
Աշոցք						10	9.78	58.5	215.8	142.2
Արթիկ	9	34.88	125.5	1000.0	660.2	104	74.16	79.4	1428.6	555.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						28	31.86	92.6	1023.2	702.0
Կապան						14	16.39	120.0	841.6	463.1
Մեղրի	2	0.45	1150.0	1150.0	1150.0	16	15.32	193.0	3000.0	845.3
Սիսիան	7	7.43	131.3	1127.5	241.8	72	71.65	46.3	1977.4	532.5
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	79	413.69	20.7	2607.2	276.3	57	182.62	125.0	10000.0	1826.0
Վայք	15	26.01	33.8	201.3	77.1	26	12.35	58.8	1430.7	640.0



Տավուշի մարզ										
Բերդ						64	16.66	213.3	3783.8	725.4
Իջևան	43	23.92	131.0	2400.0	551.8	21	5.80	267.5	9454.5	1646.7
Նոյեմբերյան	1	0.38	306.9	306.9	306.9	38	20.85	46.7	7368.4	1030.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	9	3454.2	137.5	4996.2	2236.6	125	118689.8	130.7	22200.0	2587.5
Ապարան	10	5968.8	256.0	3333.3	1434.2	20	30504.0	124.1	609.6	390.1
Թային	1	485.0	235.0	235.0	235.0	18	33041.8	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ	4	1255.5	222.0	236.3	231.9	6	23054.0	60.0	214.3	95.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	29	31023.0	357.0	855.0	562.0	90	92173.2	173.9	7140.3	902.4
Մասիս	10	4754.6	666.7	3703.5	1933.9	187	142790.9	187.5	25000.0	1204.3
Վեդի	3	99.8	1700.0	2500.0	2093.5	84	84993.9	126.1	5000.0	663.6
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	149.0	376.5	376.5	376.5	125	144199.8	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						12	13900.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	3	1942.0	1367.6	7656.0	3101.5	255	235382.0	197.4	26528.4	1530.4
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	16	18843.6	51.8	124.4	88.7	18	16166.0	186.6	1084.3	683.5
Ճամբարակ	2	1551.8	102.4	369.3	235.9	7	7392.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	20	23301.0	112.6	376.8	221.8	65	65285.7	119.3	5000.0	277.4
Սևան	3	1063.8	241.8	1398.3	971.1	9	9522.6	240.0	3110.4	348.7
Վարդենիս	4	2322.3	79.2	1470.0	716.4	16	26332.4	72.5	987.2	150.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	7	462.6	2625.0	3150.0	2946.1	13	12716.0	114.3	1388.9	216.9
Գուգարք	13	948.9	2105.7	4750.5	2598.5	18	18031.0	77.9	14083.3	1258.8
Սպիտակ						9	9570.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						5	4969.2	88.2	1666.7	176.0
Տաշիր						1	39.8	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	99	41997.1	245.8	9800.0	3146.9	257	203979.6	264.5	35353.5	1957.1
Եղվարդ	93	89705.8	210.8	4729.3	1222.1	183	157981.2	173.6	27000.0	2853.6
Հրազդան	13	4298.3	1366.0	3333.3	2543.9	23	20967.6	117.7	34848.5	1317.6
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	16	4537.8	233.0	4408.2	1943.7	40	39090.1	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						8	11787.7	67.9	180.6	217.9
Աշոցք						1	4727.0	40.8	144.0	65.0
Արթիկ	14	18748.7	122.1	2752.3	764.9	29	20244.2	111.8	5000.0	217.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						17	14659.4	112.2	1700.0	367.8
Կապան	9	3402.1	54.5	3200.0	1690.8	8	6939.3	67.9	2638.9	376.9
Մեղրի	1	76.5	840.0	840.0	840.0	9	6090.0	68.5	632.9	270.2
Սիսիան	2	1500.0	367.2	580.8	478.5	26	19365.0	123.5	875.0	263.4

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	6037.4	59.5	755.0	460.1	23	21201.9	96.7	7659.6	506.7
Վայք						3	2108.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						11	7197.1	75.8	810.0	131.0
Իջևան	14	10846.1	48.9	3000.0	1617.7	41	45940.8	74.1	14423.1	483.2
Նոյեմբերյան	5	1307.5	230.5	2200.0	1327.6	2	1121.3	125.0	1948.1	259.0

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6262 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 91.9 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակն աճել է 11.0 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 237 բնակարանի, 225 անհատական բնակելի տան, 2531 հասարակական, 1459 արտադրական նշանակության օբյեկտի, 1753 միավոր հողի, 54 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 31 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 40.4 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 16384.11 հա հողերից 6.09 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 16378.02 հա հողերից 14745.73 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1343.36 հա արդյունաբերական օբյեկտների, 39.90 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 10851.80 հա, որից 10306.01 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 16667 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.1 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 16.7 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.2 %), առանձնատների (22.4 %). հասարակական նշանակության օբյեկտների (12.5 %) և հողերի (7.6 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9787 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 24.3 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 4305.15 հա մակերեսով հող, որից 50.24 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 3193.01 հա կամ 74.2 %-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.83 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Վայոց ձորի մարզում՝ 1176.70 հա, որից 660.90 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1918 գործարք, որից 1488-ը՝ Երևանում: 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման

գործարքների քանակը աճել է 54.3 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 77.4 %-ով, իսկ մարզերում՝ 6.4 %-ով:

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 16999 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10.6 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (22.1 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**